ԳԻՐՔԻԿՈՍՈՒԹԻՒՆ. ՍՈՂՏԵՆԱԳԻՏՈՒԹԻՒՆ

ԳԻՐՔ ԲԱՐԻ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Նորոգիր քո ճամփան, նորից առաջ գնա:
Մկրտիչ Սարգսյան

Ընդհանրական այս վերնագիրը ծնվեց, երբ վերստին նայեցի «Հայաստան» հրատարակչության լույս ընծայած **«Դու անկործան վանք կմնաս»** («Հայաստան», հրատ. 2011) ժողովածուն, որ կոչված էր ամփոփելու մարդ եւ քաղաքացի, զինվոր եւ զավակ, մտածող եւ գրող Մկրտիչ Սարգսյանի կյանքի ու գործի շուրջ եղած գնահատանքի խոսքերը, կարծիք-մտորումները: Թեեւ դիտված էր որպես ժամանակակիցների հիշողությունների ամփոփագիր, սակայն ամենայն իրավամբ կարող էինք այն համարել գիրք ճանապարհի ճանաչողության: Ըստ Աստծո խոսքի, որտեղ երկու կամ երեք հոգի մեկտեղ դավանելիս լինեին, Աստված ներկա էր: Այնպես որ, հիշյալ ժողովածուն ընթերցողին հաղորդակից էր դարձնելու ոչ թե այս աշխարհ եկած եւ մեկընդմիշտ գնացածին, ընդամենը հուշ ու հիշողություն դարձածին, այլ նրան, ով կյանքից կյանք էր անցել՝ շարունակելով մնալ երկրային երթի մեջ: Սա այսպես լինելու էր, որովհետեւ ոչ միայն հիշելու, պատմելու, այլեւ կարոտելու, կանչելու էին՝ շարունակելով երբեմնի ընդհատված խոսակցությունը: Ոչ միայն իրենք էին խոսելու, այլեւ խոսեցնելու էին իրենց ընդունած, հարգած, սիրած մարդուն ու գրողին: Ոչ մեկի մտքով չէր անցնելու բարձրացնել, մեծարել կամ ինչ-ինչ կերպերով հաճոյանալ նրան, որ այլեւս ֆիզիկապես ներկա չէր: Հաղորդակցությունը հոգիների միջեւ էր, իսկ հոգին հոգու հետ անկեղծ լինելու էր: Բացի այդ, Աստծո շնորհ-բնությունը կրողը բարձրացնելու եւ մեծարելու կարիքը չէր ունենալու: Մինչդեռ բարին տեսնելու, բարի մարդու հոգեւոր ներկայության մեջ գալու կարիքն զգալու էինք: Ահա այս մղումով էլ կազմվելու էր ժողովածուն: Այս մղումն ունենալու էր վկայող ամեն ոք:

Մեր շուրջը, մեր մեջ, բազում խելոքներ ու խելացիներ, ճշմարիտներ, ճշմարտախոսներ ու նաեւ արդարամիտներ եղել են ու կան: Բայց արի տես, ինչպես ընտրյալները, այնպես էլ բարիները սակավ էին երեկ ու սակավ են այսօր: Մարդն ի սկզբանե ունեցել էր եւ հավիտյան ունենալու էր բարության ծարավը: Վահան Տերյանը, օրինակ, ժամանակին շատ ու շատ բաների տուրք տալու էր՝ հանուն ազգային խնդրի, հանուն հոգեւոր

արժեքների պահպանման եւ հանուն Հայաստանի ու հայ ժողովրդի հարատեւման: Ազգը ժամանակի անորոշ ու անհուսալի վիճակից դուրս բերելու համար, գնալով ինքնազոհության, մտնելու էր «**Յուրտ հոկտեմբերի**» լծի տակ, հայտնվելու եւ գործելու էր իր հոգուն անհարիր տեղերում էլ: Զգալով խաբված լինելը, զգալով նաեւ մոտալուտ մահը, իր երանության փափագը հայտնելու էր. «**Բարի հիշեք ինձ ձեր սրտում, մնաք բարով, մնաք բարով**»: Տերյանը, տեսեք, թախանձանքի հետ իր մաղթանքը եւս տալու էր. «**Մնաք բարով, մնաք բարով**»: Ինչ խոսք, մնաք բարով, ասել էր թե՝ բնությամբ բարի մնաք, բարության մեջ մնաք, աստվածային մնաք, Աստված ձեզ հետ լինի: Կարծում եմ, խնդրո առարկա ժողովածուի հեղինակները բարի մնացածներ էին: Նրանք, միմյանցից անկախ, քաղելով ու փնջելով հիշողության դաշտի ծաղիկները եւ հաղորդակից դառնալով Մկրտիչ Սարգսյան մարդու ապրվածային գրեթե անխաթար էությանը, հայտնվելու էին մեկ այլ աշխարհում, որտեղ ոչ նախանձ եւ ոչ տրտունջ էր լինելու, ոչ տանջանք եւ ոչ հոգնություն: Պարզապես ամեն մեկի մտքի եւ զգացման պահը՝ կուզես հիշողություն համարիր, կուզես համարիր առնչություն, հավերժանալու էր: Նրանք մտնելու էին իրենց գործընկերոջ հանգստի ու խաղաղության մեջ: Դա այդպես լինելու էր, քանի որ ոչ թե նստելու էին ստեղծագործական սեղանի առաջ, այլ վեր էին կենալու եւ խոստովանանքի կանգնելու լուռ ու անչար հոգով: Անշուշտ, երեւակայության գիրկն ընկնելով գրելը մի բան էր, հոգուն հաղորդակցվելը՝ մեկ այլ բան: Գրելը գիտություն էր, հաղորդակցվելը՝ հայտնություն: Ահա թե ինչու բոլորը միմյանց նմանվելու եւ մի մտքի էին հանգելու: Հրաշալին այլ կերպ չէր. տարբեր սերունդների, նախասիրությունների, տարբեր ժանրերի ներկայացուցիչներ, թող թույլ տրվի ասելու, բնությամբ կամեցողներ ու համեմատաբար չկամ-չմահավաններ, առանձին-առանձին, իրենց սրտերի խորքերում սեր էին տածելու մեկի հանդեպ, որն այլեւս իրենց կողքին չէր: Պատճառը պարզ էր. Մկրտիչ Սարգսյան մարդ-պաշտոնյան, մարդ-ընկերը, մարդ-գործիչ-գրչակիցը իր երկրային կենդանությանը սրտով ու ճշմարիտ սիրով պահել, սիրել էր ամեն մեկին: Ոչ մեկին չէր կորցրել, ավելին՝ աշխատել էր դրսեւորել իր բարի կամքը: Արձագանքը լինելու էր, այն է՝ սերը սեր բերելու էր: Եւ քանի որ խոսքը, աշխարհական առումով, տարօրինակ, այսինքն՝ ապրվածային, սիրուն էր վերաբերելու, ապրվածաշնչյան վկայությունը վերհիշելու էի. «**...Ինչ-որ մարդ սերմէ, այն էլ կինձէ. իր մարմնի մէջ սերմողը մարմնիցն ապականութիւն կինձէ, եւ հոգու մէջ սերմողը Հոգուցն յաւիտենական կեանք կինձէ»:** Հոգու պտուղներից առաջինը, հարկավ, սերն էր: Սերը ոչ միայն հատուկ էր լինելու աստվածայինին, այլեւ Աստծո բնություն-էությունն էր: Ահա կենաց այս գիրք-հիշատակացն էլ ինքնին սիրո արտահայտություն էր, սիրո քաղցր պտուղ: Բացի այս, միեւնույն պահին վկայելու էր Մկրտիչ Սարգսյան մարդու եւ գրողի, հոգեւոր զավակի եւ զինվորի հաղթանակը, որի մասին ինքը գուցեեւ չէր էլ մտածելու: Ասելու էի՝ Մկրտիչ Սարգսյանը կյանքի ճանապարհին նկատել, հարգել, սիրել էր մարդուն, ընդունել հարազատի պես: Իհարկե, միայն այսքանով այս գիրքը չէր արժեւորվելու եւ

չէր ամբողջանալու: Անշուշտ, գրողը դիտվելու եւ գնահատվելու էր կյանքի ու կենսակերպի բոլոր կողմերով: Հազարից միայն մեկը կարողանալու էր բոլորանվեր երեւալ այսքան ու այսպես երեւելի: Շատ փաղանդավորներ, ցավոք, կամա թե ակամա, իրենք իրենց արատավորել էին ինչ-ինչ հանգամանքներում եւ ինչ-ինչ պատճառներով: Իսկ ինչ վերաբերելու էր Մկրտիչ Սարգսյանին, խիղճս հանգիստ էր, գրիչս կաշկանդումների առիթ չէր ունենալու:

Ինչպես շատերի, այնպես էլ ինձ համար այս աշխարհի լույսի ու խավարի միջով անցնելու եւ անխաթար մնալու լավագույն օրինակ էր նա: Ծնված տեղը, որ Ջավախքն էր, ոչ միայն չէր մոռանալու, այլեւ իր սրտի մեջ շարունակ կրելու էր: Ջավախքի արձակ դաշտի ու նեղ ձորի ծաղիկներն ու աղբյուր-ջրերը ուրիշ էին լինելու նրա համար, ավելի պարզ ասած, թառամել ու ցամաքել չէին ունենալու, բուրելու, կարկաչելու էին շարունակ: Ջավախքից ու նրա ասպանդական ժողովրդից հոգով ու սրտով չհեռանալը կենաց ակունքին կպած լինելու խորհուրդը կրելու էր: Աշխարհը տեսած մարդը խոսելու էր այսպես՝ փափագելով հեռանալ աշխարհ-անապատի կեղծիքից, մարմնի աչքի եւ ականջի պղծությունից եւ ամենայն ցանկությունից, որ մարմնական էր: Հեռանալու էր ասրվածայինի թելադրանքով: Անցնելու էր վերին ոլորտներով, դեպի Ասրծո անխաթար աշխարհը տանող ճանապարհով: Ինքն էլ որպես երկրային, գնալու էր երկնայինին մերվելու. **«Իմ ծննդավայրում բարձր են լեռները, Արուլի գլխին ոչ թե հյուր, այլ տանտեր է ձյունը: Խոր են ձորերը, ձորերի ձմեռները գարնան պես են, սարերի գարունները՝ ձմռան հանգույն: Ինձ համար նա աշխարհի ամենատաք, ամենաջերմ անկյունն է, ուր ապրել եմ ավելի սրտով, քան խելքով: Իմ ծննդավայրն ինձ համար մնացել է մորս սրտի պես ջերմ, տատիս գրպանների նման քաղցր ու խորհրդավոր եւ ընկերներիս պես՝ պարզ ու հասկանալի: Աշխարհում չգիտեմ մի այլ աշխարհ, ուր երկինքն ու երկիրը այդքան կրքոտ գրկախառնված, մերված լինեն իրար: Ասրդերը նման են լճին շաղ տված շուշանների...»:** Ջավախք ասելիս հայոց լույսի աղբյուր Էրզրումն էլ հետը հասկանալու էինք: Խորն էին Մկրտիչ Սարգսյան մարդու արյան մեջ տառապող հոգու հիշողության արմատները: Ձայները հեռվից գալու, զավակի սրտի միջով անցնելու եւ հասնելու էին մեզ, որպեսզի զանազան կերպերով մենք մեր հերթին փոխանցելու լինեինք գալիք սերունդներին: Նախնյաց ձայները ժառանգությունն էին նրա: Նախնյաց ասելիս նկատի էի ունենալու ազգի նախակարապետներին, սկզբում եղածներին, նրանց, ովքեր ասրվածաշնչյան էին: Այլ կերպ ասած, նա, որպես զավակ, կրելու էր ազգին տրված ասրվածային բնությունը: Ազգի հավաքական միտքը գործելու էր: Ազգի լույսն ու ստվերը, վերն ու վարը, խորթն ու հարազատը երեւալու էին նրանով: Որպես զավակ ու գինվոր, գործիչ ու գրող, նվիրյալ լինելու էր: Ամենը ամենի մեջ, ամեն պարագայում, երեւալու էր: Ապրելու էր այնպես, որ նայող-տեսնողը, կամա թե ակամա, ասեր. «Ահա իսկական Մարդը»:

Դառնանալու, ձեռքը թափ տալու եւ ասպարեզից հեռանալու առիթներ ունենալու էր: Առիթ-հանգամանքներին չէր նայելու. իրենը մինչեւ վերջ համբերելն էր, քանի որ նպատակը վեհ էր: Հայրական գուրգուրանք գրեթե չէր տեսել, ինքը, սակայն, երիտասարդների հանդեպ հայրախնամ էր: Ոչինչ որ ճակատագրով դատապարտված էր, գերդաստանին, երկրին ու ժողովրդին հավատարիմ մնալու էր: Իսկ հավատարմությունը խոնարհաբար ծառայելով եւ անմնացորդ նվիրվելով դրսեւորվելու էր: Ծուշան մոր օրորոցային մեղեդի-մաքրություն-սրբությունը որպես հավիտենական ժառանգություն, սրտի մեջ կրելու էր: իր մորը, իր երեխաներին սիրողը սիրելու էր աշխարհի մայրերին ու երեխաներին: Ջավակին բարի շնչով ու բարի խրատով մեծացնողը սերունդներին տալու էր նույն կերպ վարվելու խորհուրդը: Բարությունից խոսելուց առաջ, ինքը բարին գործելու էր: Այն, ինչ տրված էր իրեն, ուսումնական ոչ մի հաստատությունում ձեռք չէր բերելու: Իսկ իրեն տրվածը Աստծո շնորհն էր, որ ունայն չէր անցնելու: Գրիչ վերցնելիս դես ու դեն չէր ընկնելու, գրական այս կամ այն իզմին, այն է՝ այս կամ այն ուղղությանը, չէր հետեւելու. ազգին ու մարդուն կարեւոր բան ուներ ասելու եւ ասում էր: Ասում էր ինքը, ասում էին գրական կերպարները: Սերժանտ Կարոյին տեսել էր տակավին Ջավախքում գտնվելիս, իր եւ Կարոյի միջեւ նմանություն գտել էր, նրա մեջ հայտնաբերել էր նաեւ զինվորի հավաքական կերպը, մնում էր բերել, մտցնել գրականություն: Կարոն, թեեւ սերժանտ, պատերազմի թոհուբոհի մեջ հայտնված, իր դասական պարզության, միամտության եւ նախատեղծ բնության մեջ մնալու էր: Կարոն ինքն էր, իր զինվոր տեսակը, ասել է թե՝ Կարոն իր իսկ էության մասն էր:

Թեմաներ փնտրելու չէր, քանի որ աչքի տեսածն ու ականջի լսածը, որպես նյութ, ծառայելու էին: Ասենք, անգամ «Քաջ Նազարը» գրելիս բանը հորինելու խնդիր չէր ունենալու: Ինչո՞ւ: Որովհետեւ շուրջը շարունակ վխտացել էին «քաջ» նազարները: Մնում էր արտահայտչաձեւ-միջոցը գտնել, մի բան, որ ժողովրդի շուրթին կենդանի բառ ու բան դարձած էր: Ճիշտ ընկալման շնորհիվ ժողովրդական իմաստությունը, սերնդից սերունդ անցնող խաղ-կատակը, հումոր-հիպերբոլը, մտքի ու մտածողության բանավորի ընդհանրականը պարզ ու շիտակ կերպերով երեւալու էին: Կյանքի ողբերգականն արտահայտվելու էր առանց ողբերգական շեշտերի եւ առանց ծանրացնելու առանց այն էլ ծանր կյանքը: Թեման նոր չէր, նորը Մկրտիչ Սարգսյան գրողի մտքի համարձակությունն էր: Խստապահանջ ու խորագետ Հովհաննես Շիրազն իսկ զարմանալով հիանալու եւ հիանալով զարմանալու էր. «**Մուկուչը տեսնես ոնց է գրել «Քաջ Նազարը», փոփոխության ենթարկելու բան չկա, կատարյալ է»:**

Հետաքրքիր էր, ժամանակի մեծերը, մասնավորապես սերնդակիցները, Մկրտիչ Սարգսյանին պարզապես **Մուկուչ** էին կոչելու: Կարծելու էի՝ դա նրա պարզ, հասարակ ու ընկերական լինելուց էր: Հետաքրքիր էր նաեւ, որ նա առանձնապես տարբերություն չէր դնելու վարած պաշտոնների ու սովորական աշխատանքների միջեւ: Իրենը խոնարհաբար ծառայելն էր եւ ծառայում էր: Ճշմարտության առաջ չէի մեղանչե-

լու, եթե ասելիս լինեի՝ նրա համար, վերաբերմունքի առումով, մարդկային ջերմության առումով, գրեթե միևնույնն էին մեծն ու փոքրը, փաղանդավորն ու շնորհալին, փկարն ու զորավորը: Բայց երբ հանդիպելու էր մեծ շնչի գործի, լույսաշխարհ բերելու միջոցը գտնելու էր: Իր հեղինակության, հոգեւոր իշխանության, պաշտոնի ընձեռած հնարավորության գիտակցությունն ունենալով, օրինակ, Պարույր Սեւակի **«Եղիցի լույս»**-ը խմբագրելու, տպարան ուղարկելու եւ տպագրել տալու էր ինքը: Պետական մեքենան գիրքը կալանքի տակ դնելու էր: Մի բան էր, սակայն, անտիպ գործը տպագրելը, բոլորովին այլ բան՝ տպագրվածը պաշտպանելն ու ժողովրդին հասցնելը: Այստեղ արդեն Մկրտիչ Սարգսյանը մենակ չէր: Գիրքը, որ լույս էր տեսել, ժողովրդին հասցնելու համար նրա հետ միանալու եւ համառորեն մարտնչելու էր մտավորականության մի ողջ բանակ: Ի պաշտպանություն **«Եղիցի լույս»** գրքի, բանավոր եւ գրավոր խոսքեր հնչելու էին: Մկրտիչ Սարգսյանը մինչեւ վերջ մնալով սկզբունքին հավատարիմ, գրում եւ տպագրում է «Լույսի կալանումը» խորհրդավոր ու խոցող վերնագիրը կրող հոդվածը: Գրքի ազատ արձակման գործում կարեւոր էր Հայաստանի կոմկուսի կենտկոմի գաղափարական գծով քարտուղարի վերաբերմունքը: Հարկ եմ համարելու մեջբերել Գեւորգ Արշակյանի վկայությունը. **«Դուք կարող եք մեզ հեռացնել կուսակցությունից, աշխատանքից, բայց ձեր «կառուցած» ժայռը ձեզ վրա փուլ է գալու,- ասաց Մկրտիչը եւ վիրավոր ձեռքը տարավ դեպի քարտուղարի մռութը: -Ես պատերազմում եմ ապացուցել այս երկրի քաղաքացի լինելը, իսկ դու ձեր քաղաքային հավարնում»:** Թվալու էր, թե ասվածը խիստ էր եւ անհարիր նրա նման խաղաղարար մարդուն, սակայն հիմքում դարձյալ գործի բարին էր: Եկել էր պահը, որ իր անձը եւ իր հեղինակությունը ծառայեցնելու էր **լույսը** կալանքից դուրս բերելուն: Ի դեպ, նրա կոիվը երբեք իր անձի հետ կապված չէր, ավելին, երբեք կոիվը այս կամ այն անձի դեմ չէր: Կոիվը գաղափարական էր, արդարության եւ անարդարության սահմանազծին էր տեղի ունենալու:

Երբ Ախալքալակի հայկական միջնակարգ դպրոցում հայոց լեզվի եւ գրականության ուսուցիչ էր, հավատարիմ էր մնալու մանկավարժի կոչմանը: Իսկ երբ հրատարակիչ էր, այն էլ գլխավոր խմբագիր, գիտակցելու էր, որ իր կոչումը մտքի, մտածողության ջարն ու բարին, հոգու լույսն ու խավարը զանազանելն էր, եւ զանազանում էր: Երբեք վարքի եւ պաշտոնի չարաշահման համար դիտողություն իսկ չէր ստանալու: Ինչո՞ւ: Որովհետեւ շահը երբեք անձնական չէր լինելու: Ամեն պարագային՝ շահը հանուն գրի, գրականության եւ ազգի լուսավոր ապագայի էր: Գիտեր, որ տպագրելով Քր. Թափալգյանի «Պատերազմ» վեպի 4-րդ հատորը, նկատողություն ստանալու էր: 1965 թ. էր, տպագրում է եւ ՀԿԿ կենտկոմի բյուրոյի խիստ նկատողությունը «վաստակում»: Գիտեր, որ «Գրական թերթում» Հրանտ Մաթեւոսյանի «Ահնիձոր» պատմվածքին վերաբերող հիացական հոդված տպագրելու համար իրեն անպատիժ չէին թողնելու: Տպագրելու եւ առանց բողոքի ընդունելու էր նույն Կենտկոմի հերթական նկատողությունը:

Իսկ ինչ վերաբերելու էր Պարույր Սեւակի «Եղիցի լույս» գրքին, գիտեր, որ ոչ միայն հանդիմանելու, այլեւ հասկացնելու էին, որ ինքը դիմում տար եւ հեռանար գլխավոր խմբագրի պաշտոնից: Նույն խոնարհությամբ նույն **Հայպետհրատում** աշխատանքի էր անցնելու որպես ավագ խմբագիր: Ճիշտ այդպես, կարեւորը գործն էր եւ ոչ թե պաշտոնը: Պաշտոնը կորցնողը սովորաբար խաղաղությունը կորցնելու էր, պաշտոնի հետ իրենց գլուխն ու կյանքը կորցնողներ էլ էին լինելու: Մինչդեռ Մկրտիչ Սարգսյանի գերագույն նպատակը հոգին չկորցնելն էր: Ազգային արժեքը, հոգեւորը, ամեն բանից վեր էր դասելու: Աստծո տվածը ոչ ծախելու էր եւ ոչ էլ փոխելու: Անձը կորցնելու գնով էլ հոգին պահելու էր, այն հոգին, որից բխելու էր կյանք-ճշմարիտը: Հարցնելու էին՝ պատերազմի դաշտում մարդու ճակատին գնդակ արձակել, սպանե՞լ ես: Պատասխանելու էր. «**Զինվոր էի, պարտավոր էի կրակել, օդում կրակոց հնչելու էր, ինչ իմանայի՝ դիպչելո՞ւ էր, թե՞ ոչ**»: Հայտնապես գիտենալու էր, որ կռիվը մահը խափանելու համար էր եւ ոչ թե մարդու կյանքը մահվան մատնելու: Պատերազմը դիտելու էր որպես հավիտենական չարիք ընդդեմ մարդկության: Կյանքի բոլոր հանգրվաններում էլ նրա կռիվը միտված էր չարը խափանելուն եւ բարին հաստատելուն: Իսկ գրական դաշտում, որպես հոգեւոր զինվոր, կռիվը մղելու էր ընդդեմ հոգու խավարի: Ասելու էի վերստին Սեւակին չէր պաշտպանելու, անձի խնդիր չէր ունենալու, խնդիրը լույսը աշխարհ բերելն էր: Ինքն էլ, խնդրեմ, լույսի նման լինելու էր: Այս լույսի շնորհիվ մարդիկ նրան տեսնելու էին բարության դաշտում: Կենտրոնականներն էլ էին այս լույսը տեսնելու: Առաջին դեմքերն իսկ պատկառելու էին, երբեմն նրանով, նրա անձով ու կարծիքով ստուգելու էին իրենց որոշումների ճիշտն ու սխալը: Հավատալու էին, որովհետեւ իրենը փնտրող չէր, անկողմնակալ էր: Քանի, քանի անգամներ հարցնելու էին. «**Իսկ ի՞նչ կասի գրողը**»: Իսկ ինչ է, ուրիշ գրողներ չկայի՞ն: Իհարկե, կային: Մկրտիչ Սարգսյանին էին հարցնելու, որովհետեւ նա ավելին էր, քան գրողը: Վստահելու էին, որովհետեւ նրա անցած ուղին եւ բռնած ճանապարհը միանգամայն անբիծ էին տեսնելու:

Բանաստեղծությամբ էր հանդես եկել, ժողովածուն կոչելով «**Գեղակ**»: Իսկ գեղակը խորհրդանշելու էր հոգուց ու սրտից բխած խոսք-խորհուրդը: Գեղակն անցնելու էր այս աշխարհով, վազելու էր, օդը մաքրելով , ճանապարհին կյանք ու կենդանություն պարգեւելով: Գեղակը սկիզբ էր առնելու ազգի հոգու խորքից, անցնելու էր Էրզրումով, Ջավախքով, Հայաստանով եւ չար ու բարու խառնարան այս աշխարհով: Գեղակը հոսելու էր դեպի հայոց կարոտի ծովը, հալվելու, հավերժանալու էր: Իսկ երբ վրա էին հասնելու փորձությունները, տեսնելու, ճաշակելու եւ գրելու էր «**Կյանքը կրակի տակ**» գիրքը: Իրեն տեսնելու եւ գրելու էր «**Ճակատագրով դատապարտվածները**»: Իրեն, իր բնույթը զգալու եւ խոսելու էր «**Բարեւ, բարի արեւ**» գրքով: Կանգնելու էր Տիրամոր պատկերի առջեւ, սրբությանը հաղորդակցվելու եւ այդ իսկ վերնագրով գիրք գրելու էր: Խորանալու, հասնելու էր «**Գրիգոր Նարեկացի**» պատմավեպին: Ինչ-ինչ մղումով գրելու էր «**Դարավերջի հայը**» վեպը: Իր իսկ կյանքի ճանապարհի խորհուրդն

արտահայտելու էր «**Դարձ**» դրամատիկական վիպակով: Մինչ այդ ճաշակելու եւ բացահայտելու էր «**Խաչված քաղաքը**» պատմավեպը: Մայրական մեղեդին թելադրելու էր «Մայրս երգում է նանիկ» բանաստեղծությունների գիրքը: Հետո, հետո, երբ այլեւս ֆիզիկապես բացակայելու էր, երբ այլեւս ոտքով չէր քայլելու, լույս էր տեսնելու նրա անտիպ երկերի ժողովածուն. «**Քայլիր, ինչպես որ մեծին վայել է**»: Այնուհետեւ, 2011-ին շուրջ ինեսուն մարդու մտքով հասունանալու եւ աշխարհ էր գալու «**Դու անկործան վանք կմնաս**» վկայությունների ժողովածուն: Ինքն այդպես մտածել, խոսել էր, նույնը ասելու, հաստատելու էին իրեն ճանաչողներն էլ. վանքը խորհրդանշելու էր սրբությունը: Իսկ սրբությունն առանց մաքրամաքուր էության ու առանց լույսի ու բարության չէր: Ճշմարտության ճամփով ընթացողը, անկասկած, օրհնվելու էր: Օրհնվելու էր ոչ միայն ինքը, այլեւ ընտանիքը, զավակները, սերունդը:

Քանի որ վկայությունների այս գիրքը բարության հոգով էր, բարությունից խոսելու էի: Մի կարեւոր հանգամանք եւս նշելու էի. բարին առանց ճշմարտության չէր: Բարին զործվելու էր ճշմարտությանը հասնելու, ճշմարտությունը հաստատելու մղումներով: Ահա այստեղից էլ այս գիրքը սկիզբ առնելու էր: Ամեն մեկը հանգիստ խղճով խոսելուվկայելու էր: Տեսեք, գրող, գործընկեր Պերճ Ջեյթունցյանն առանց վարանման բացվելու էր. «**Նա բացառիկ անձնավորություն էր, մաքրամաքուր մարդ, անսահման ազնիվ ու բարի: Կյանքի մեծ դպրոց էր անցել, քայլել մեր խորդուբորդ անցյալի դժվարին ճամփաներով ու իր կենսագրությամբ, նաեւ իր բազմաթիվ գրքերով, ապացուցել, որ երբ մարդը անազատ պայմաններում չի ուզում հոգին ծախել սատանային, կարող է գոնե ներքին ազատություն նվաճել եւ չաղտոտել իր անունը**»: Այս վկայության հեղինակն արդյո՞ք հորինել-ստեղծելու կարիքն զգալու էր: Իհարկե, ոչ: Հոգու թելադրանքը նման բանի կարիք չէր զգալու: Ուրիշ բան էր, եթե գրական հերոս կերտելիս լիներ: Պարզապես պահը եկել էր եւ խոստովանելու էր, իսկ խոստովանությունը լինելու էր խղճի առաջ, մարդկանց առաջ, Աստծո առաջ: Այս նույն անկեղծությամբ, անմիջականությամբ եւ պատասխանատվությամբ էին լինելու բոլոր վկայությունները:

Վկայողներից ամեն մեկը առանձնացնելու էր գրողի այս կամ այն հատկանիշը. «**Մկրտիչ Սարգսյանը, երկրորդ պատերազմէն ետք, մանավանդ վերջին տասնամյակին, ինքզինք պարտադրող ամենէն ուժեղ արձակագիրներէն մէկն է Հայաստանի գրականութեան մէջ, մասնաւորաբար իր ոճին առոյգ եւ պատկերաւոր գնացքով, արտայայտութեան ինքնատիպ կերպով, գիւտերով, անմիջականութեամբ, այլ բոլորէն վեր եւ ամենէն թանկագին մէկ յատկանիշով- իր անկեղծութեամբ**»: Այս բնութագիրը Անդրանիկ Ծառուկյանինն էր՝ նվիրական մակագրությամբ. «**Կրակի պէս տաք,/ Նուռի պէս յստակ Մկրտիչին**»: Ծառուկյանը անկեղծություն որ ասում է, վերաբերելու էր ոչ միայն բնավորությանը, այլեւ հավատին

ու սիրուն, որոնց շնորհիվ չար ժամանակներում էլ նա շարունակելու էր մղել իր բարի պատերազմը:

Մարդու ձեռքով վառած բոլոր խարույկ-կրակները հանգչելու էին եւ սառնության շունչը վերստին իջնելու էր, սակայն կրակը, որ նկատելու էր Անդրանիկ Ծառուկյանը, շարունակելու էր ջերմացնել մարդկանց սրտերը գալիքում էլ: Ինչո՞ւ: Որովհետեւ մարդու միջոցով, մարդու վառած չէր, ասել է թե՝ Աստծո շնորհ էր: Մկրտիչ Սարգսյանն ինքն էլ գործելու էր ոչ թե այնպես, ինչպես ուզելու էր, այլ այնպես, ինչպես վայել էր աստվածային կայծը կրող մարդուն: Ցավով նկատելու էի նաեւ, աստվածայինը կրողներից ոմանք՝ ընկնելով փորձությունների մեջ, գայթակղվելու եւ աշխարհի կերպն ընդունելու էին: Հուդան առաքյալ չէ՞ր: Տասներկուսից մեկն էր: Գայթակղվեց, երեսուն արծաթն ավելին համարեց, քան Հիսուս Քրիստոսին աշակերտելը, ավելին համարեց, քան Քրիստոսի կյանքը: Եսավը, օրինակ, մարմնի ցանկությանը հետեւելով, իր օրհնություն-օծություն--ավագությունը, որ աստվածային ժառանգություն էլ էր, փոխեց մի ման սպասով: Մարդու կյանքը լցված է նման մոլորություններով, որոնց պատճառած վնասը մեկ այլ բան չէր կարող լինել, եթե ոչ մահ: Մինչդեռ անբիծ ուղիով մինչեւ վերջ, մինչեւ երկրային կյանքի ավարտն ընթացողը ճշմարիտ կյանքի անթառամ պսակին արժանանալու էր: Խնդրեմ, արդյո՞ք վկայությունների այս ժողովածուն, այս գիրք հիշատակացը մի վերին կյանքի անթառամ պսակ չէ՞ր հիշեցնելու: Անկասկած մի վերին բան, մի վերին խորհուրդ նրա երկրային կյանքում լինելու էր: Աստված օգտագործելու էր իր շնորհը զոհությամբ կրող, շնորհի արժեքն իմացող, պահող եւ գործի դնող ամեն մարդու: Այս աշխարհը կանգուն մնալու էր այնքանով, որքանով նրանում գործելու էին Աստծո մարդիկ: Իսկ Աստծո մարդ լինելու համար արտառոց բաներ հարկավոր չէին, բավական էր հավատարիմ մնալ կոչմանը եւ աստվածային բնությանը: Գրողին, օրինակ, բավական էր բարին խոսելուն եւ գրելուն զուգահեռ բարության կյանքն ապրել եւ բարին գործել: Նկատի ունենալով փարիսեցիներին եւ օրենքի ուսուցիչներին, Հիսուս Քրիստոսն ասելու էր՝ լսեցեք ու արեք նրանց ասածները, բայց գործերին մի՛ հետեւեք:

Այստեղ, այս գրքում, ուրեմն, իր ողջ հասակով մեր առջեւ կանգնելու էր ոչ միայն գրող, այլեւ իր խոսքին հետեւող Մկրտիչ Սարգսյանը: Նրա վարքն ու գործը, սերն ու բարությունը տեսնելու եւ Աստծուն զոհություն հայտնելու էին: Նա ինքն էլ ապրած եւ չապրած կյանքը քննելիս, դեռեւս այս անկայուն աշխարհի վրա գտնվելիս, իր իսկ ձեռքը բռնելու եւ ինքն իրեն հորդորելու էր. «**...Որ թեկուզեւ ծեր, բայց չես հնացել,/ Եւ ծանր օրերին մնացել ես մարդ»:** Այս այն Մարդ երանելին էր, Մարդ մեծապառովը, որի մասին Հովհաննես Թումանյանը խոսելու էր. «**Եւ հեռու է մինչեւ Մարդը իր ճամփան»:** Հիրավի, որքա՜ն ճամփա պիտի անցներ մարդ-մարմնավորը, մարդ-հոգեւորին հասնելու համար: Ուրեմն, ինչպես որ ընդամենը գրող լինելը մի բան չէր, այնպես էլ՝ ընդամենը մարդ: Վերին շնորհը, վերինի ձգտումը, եվիրում-զոհաբերումը, անձը չխնայելը, բաժանել-բաշխելը անհրաժեշտ.

Ինչ որ ունեիր դու փվիր մարդուն,
Ե՛ւ երգեր ու սեր, եւ՛ սիրտ ու ավյուն,
Քո խոսքը եղավ թթվածնի պայթյուն,
Եւ կյանքդ՝ լուսե լիարժեք այրում...

Ուշագրավ էր ու նաեւ ցանկալի. Մկրտիչ Սարգսյանն ինքը էջից էջ մեզ ուղեկցելու էր շարունակ, այսինքն՝ նրանից մեջբերումներ լինելու էին եւ նրանով մեր միջի բարությունը հորդելու էր: Նա ինքն իր մեջ, ինքն իր հետ խոսածը խոսելու էր ամենքի հետ.

Ուզում եմ լինես նման աղբյուրի,
Քո զովությունից թող քեզ ճանաչեն,
Սիրով սպառվես ծարավ շուրթերին,
Ինքդ քեզանից երբեք չամաչես:

Մտածելու էր մարդը, բայց միտքը գալու էր Աստծո խոսքից. «**Ծառը՝ պտղով, մարդը գործով կճանաչվի**»: Մտքի այս աղբյուրն իսկ ակունքով աստվածաշնչյան լինելու էր, այսինքն՝ բխելու էր ներսի մարդու բնությունից. «**Քո զովությունից թող քեզ ճանաչեն**»: Ծարավին ջուր տանելը, ծարավ շուրթին ջուր լինելը, ինչ խոսք, աստվածահաճո էր, աստվածընծա: Աստծո տված ավելին էր լինելու, քան մարդու տված գնահատական-կոչումները. «**Բարի էր անսահման, ու բարությամբ, մարդասիրությամբ էին ցողված նրա երգերը**»: Բնութագրողը Սեւակ Արզումանյանն էր, որ խոսքի ընթացքում գալու, հայտնվելու էր նույն տեղում, նույն մտքի մեջ. «**Բարու եւ մարդկայինի նվիրյալներից էր Մկրտիչ Սարգսյանը, մեր պայծառ Մուկուչը, ու որքա՛ն տեղին է հիշել. «Ա՛խ, երանի ով մարդ կգա ու մարդ կերթա անարատ»**»: Արդյո՞ք սա միայն հուշ-հիշողություն էր, թե՞ արդարության, բարության ու մաքրության մթնոլորտում հայտնվելու փափագ: Բարին հիշատակելը, սրտի մեջ տարիներով կրելը նշան չէ՞ր բարությանը հետեւելու:

Գրականությունն ինչ էր: Նախ՝ հոգեւոր սնունդ, ապա՝ կենսակերպ, հայացք դեպի աշխարհն ու մարդը: Միաժամանակ հոգու ճանապարհ չէ՞ր, մարդուն մի տեղից մեկ այլ տեղ տանելու միջոց չէ՞ր: Գրականությունը, հիրավի, մեկ այլ բան չէր, եթե ոչ հոգու ընթացք դեպի վերինը, դեպի աստվածայինը: Իսկ աստվածայինը վկայելու էր Աստծուն: Ամեն բան սկսվելու էր ծնունդից, ծննդավայրից, ու՝ մանկությունից: Ինչ էլ որ լիներ, մարդը վերստին տեսնելու եւ վերապրելու էր այն, ինչ տեսել-զգացել էր մանուկ ժամանակ: Ամեն ոք վերադարձի փափագն ունենալու էր: Ակունք-արմատով մաքուրը մաքուր էլ մնալու էր.

Այնտեղ սրտի պես սարերը բաց են,
Եւ սրտի նման աղբյուրները պարզ,
Ծաղիկներն այնտեղ շաղերով թաց են,
Երկինքը կապույտ, երկինքը երազ...

Մաքուր մնալը մի բան էր, մեկ այլ բան՝ մաքրությանը մարդկանց հաղորդակից դարձնելը: Այս առումով ուշագրավ էր Սերո Խանզադյանի վկայությունը. «**Նրանով առնչվում եմ մեր հայոց Ջավախքի ժողովրդական հոգեբանությանը, որ ազնիվ ու անարատ է մնացել դարերի ահեղ փորձությունների մեջ: Մկրտիչով ես ճանաչեցի Կարին-Էրզրում կորած աշխարհի հայ հոգին, նրա երազանքը (միշտ պայծառ) եւ չմթագնող հույսը»:**

Քանի որ ինձ էլ բախտ էր վիճակվել ոչ միայն առնչվելու, այլեւ ճամփորդելու նրա հետ, վկայելու էի. Մկրտիչ Սարգսյանն իր անմիջականությամբ, անկեղծությամբ, առանձնակի սիրով ու հավատով հայրենակիցներին եւ օտարներին ճանաչել էր տալու հայ գրողին ու հայ մարդուն: Մասնավորապես Վրաստանում տեղի ունեցող միջոցառումներին ներկա գտնվելուց բացի, ազգային, հասարակական եւ, ինչու չէ, պետական-կուսակցական իր գործը կատարելու էր: Նրա մասնակցությունը միջոցառման մթնոլորտը փոխելու էր: Գրելը ոչ թե սոսկ մասնագիտություն էր, այլեւ ապրելու կերպ էր, կյանք էր: Օտարներն ուզեին, թե չուզեին, նկատելու էին, որ իրենց առջեւ կանգնածը չարից հեռացած մարդ էր: **Անխառն արյուն կրող վրացին, հանձին Մկրտիչ Սարգսյանի, տեսնելու էր իրեն իր իսկ աչքով նայող հային:** Պահը ծանրացնող չէր: Հումորով լիներ, թե հավատի խոսքով, իր ներքին ազատությանը շրջապատին հաղորդակից դարձնելու էր: Ինչպես որ նրա գայրույթի մեջ բարություն, այնպես էլ կատակով ասված խոսքի մեջ վերին մի խորհուրդ լինելու էր: Նրա հետ սեղան նստելն իսկ ցանկալի էր, քանի որ սիրո միաբանությամբ պահելու էր սեղանի եւ հացի սրբությունը: Ինչպես ասելու էին, հացի պես համով ու արդար մարդ էր: Ասպվածաշնչյան լեզվով ասած, այս գիրք մնացորդացն էլ որ կար, մեր իսկ հոգիները մխիթարելու մղումով ծնվելու էր: Մարդն իր բոլոր օրերին իրեն բարի աչքով նայողին կարոտով փնտրելու էր: Սիրող-կարեկցողը շարունակելու էր սիրել այս աշխարհից անդին էլ. չէ՞ որ կյանքը հոգին էր եւ ոչ մարմինը:

Վերստին դառնամ վկայություններին: Ահավասիկ, Անահիտ Սահինյանի խոսքբնութագիրը. «**...Սրտակից, ցավակից ամեն մեկիս առանձին-առանձին եւ բոլորիս միասին: ...Նրա պաշտոնն ու դիրքը գրականության ընդհանուր շահի, նաեւ գրողներից յուրաքանչյուրի համար էին, մեզնից ով հայտնվեր փորձանքի մեջ, նրա օգնության կարիքը կունենար: Ահա այս կերպ էր մտած պաշտոնյա Մկրտիչ Սարգսյանն իր ժամանակակից, իր ընկեր-գրողներից յուրաքանչյուրի կենսագրության մեջ»:** Անահիտ Սահինյանի ասածը կարծես վերաբերելիս լիներ այս ժողովածուին էլ:

Վախթանգ Անանյանի խոսքը մեկ այլ բնույթի խոստովանություն էր. «**Սրտումս**

մի մեծ բողոք կար ուղղված 37-ի դեպքերի դեմ եւ մեր հերոս գերիների նկատմամբ հակամարդկային վարմունք ցույց տալու դեմ: Սիրտս արյունոտված էր, սիրտս լիքն էր, բայց դատարկել չէի կարող, գրիչս անզոր էր: Դու արել ես էդ բանը եւ այն էլ ի՛նչ ուժով, ի՛նչ ցասումով...

Հիմի սիրտս հանգիստ է:

Է՛հ, ո՞ր մեկն ասեմ, Մկրտիչ ջան, էնքան իմացիր, որ դարձար հարազատ, մտերիմ, սիրելի, շատ սիրելի: Էս ինչ լավ հոգի ունես...»: Այս վերջին արտահայտությունը կարծես հառաչանք էր, որ մարդն արձակելու էր բանը հայտնագործելիս: Ճշմարտության եւ սրբության ճառագայթը կրող այս հոգին էլ, հիրավի, ընկածին՝ բարձրացնելու եւ տկարին զորացնելու էր:

Այն որ Մկրտիչ Սարգսյանինը հոգու աշխատանք էր, վկայելու էին շատերը. **«Գիրքն ավարտելուց հետո քեզ կարող է թվալ, թե դու ձեռքումդ բռնել ես երաժշտական մի արկղիկ, որտեղից ծորում են հոգեհույզ նվագներ: Բնությունը Մկրտիչ Սարգսյանի մոտ կենդանանում է տեսանելիության աստիճանի, դառնում է շոշափելի եւ մարմնական, բայց մի ինչ-որ հոգեկան մարմնականությամբ: Ո՞ւմ նման է նկարագրում բնությունը: Ի՞ր նման: Դիպուկ ու գեղեցիկ»**: Այս բնութագիրը ժամանակին տվել էր Մկրտիչ Արմենը: Մյուսների նման նա էլ լսել էր Հոգու թելադրանքը եւ նույնությամբ, առանց ավելացնելու եւ պակասեցնելու, գրել:

Ասացի՝ հոգու աշխատանք էր նրանը, իսկ հոգին չափ ու սահման չէր ճանաչելու: Վերջին հային էլ նա պատկերելու-պատկերացնելու էր այնպիսին, ինչպիսին ի սկզբանե եղել էր, այսինքն՝ բնույթով ասպվածաշնչյան. **«Նստել էր պատշգամբում եւ նայում էր ծիրանի եւ նշի ծառերին: Գարուն էր, ապրիլ: Վեց տասնյակ տարուց ավելի կյանք էր ապրել, բայց թվում էր, թե աշխարհը հայտնագործում էր առաջին անգամ: Եւ սպիտակ, նորահարսի նմանվող ծառերը եւ Երեւանի արարչագործ արեւի արբեցնող զգվանքը եւ զարնան թուլացնող ջերմությունը եւ ոչ հեռվում վրաններ հիշեցնող Արարատի գագաթները, որ լողում էին զարնան թափանցիկ կապույտի մեջ, եւ թվում էին անիրական, ասես Աստվածաշնչից պոկված պատկերներ»:** Աստվածաշնչյան միտք-մտածողությունը նրա գրական էջերում այնպես խոր ու միաձույլ դրված է, ինչպես, ասենք, բուրմունքը ծաղկաթերթերում. **«Արամազդը սերում էր մի ընտանիքից, որն ապրել էր մեռնելու-հառնելու եւ՛ զարհուրանքը, եւ՛ հարությունը»:** Խնդրեմ, քրիստոնյա հային տեսնելու էինք Հիսուս Քրիստոսի էությունը կրելիս: Իսկ որպես կուսակցական գործիչ նկատելու եւ ասելու էր, որ կոմունիզմի սկզբունքները ծնվել էին Աստվածաշնչից: Ասելու եւ միաժամանակ ցավով զանազանելու էր թղթի վրա եղածը եւ իրականությունը. **«..Փաստը մնում է փաստ, լենինյան «հանճարը» երկնել էր օրապակաս մի տերության մոդել,**

որը յոթանասուն տարի պահպանվեց ոչ առանց արյան ու բռնության: Եւ խորտակվեց»:

Աշխարհայացքի առումով, նույնն էին լինելու բանաստեղծն ու արձակագիրը, որովհետեւ բիւրմը միեւնույն բնությունից էր: Բանը, որ Աստծուց էր, ոչ միայն ապրելու, այլեւ ապրեցնելու էր: Ով նայել էր Արարատին, խորհելու, խոսելու, երբեմն էլ երգելու էր: Նա էլ իր խոսքն ասելու էր.

Այս աշխարհում լեռները շա՛տ, հազար երկինք փլած լեռներ,
Բայց Աստծո օրհնությանը արժանացած լեռն ուրի՛շ է...

Օրհնությունը տեսնողը գինվելու էր նաեւ հավատով.

Եւ մեր սիրուն ու կարոտին դու ընդառաջ կգաս, գիտեմ,
Էլ չե՛ն ասի, էլ չե՛ն ասի՝ Արարատի տերն ուրիշ է:

Հավատը հենց այնպես չէր լինելու, կասկած չունեմ, նրա հավատը նույնպես օրհնությամբ էր: Այս ժողովածուն էլ օրհնությամբ ծնված էի համարելու: Այս առումով, տեսեք, թե որքան տեղին ու դիպուկ էր Արշակ Մադոյանի խոսք-վկայությունը. «**Ազնիվ, շիտակ գրող եւ քաղաքացի էր Մկրտիչ Սարգսյանը: Իսկ արդարների հիշատակը, ինչպես ասում են, օրհնությամբ է լինում: Սա այդ դեպքն է»:**

Ժողովածուին վերաբերող հանգամանալից խոսք ասելու ցանկությունը պարտադրելու էր ինձ նորից ու նորից հետեւել կարծիքների հանդարտ ընթացքին: Վերանայելու էի նաեւ գրողի արձակ ու չափածո գործերի նմուշները, որ տեղ էին գտել բարի վկայությունների այս գրքում: Ուզեի թե չուզեի, խոստովանելու էի, որ մեր միջի ընտրյալը կարծես ջուր խմած լիներ մեր սրտերից, կարծես մեր իսկ սրտով ու մեր իսկ շուրթերով մեզ հետ խոսելիս լիներ.

Բա՛վ է լոգունգ ուտես դու փոխարեն հացի,
Եւ ծիծաղես, խնդաս դու փոխարեն լացի,
Եւ խավարը պաշտես ինչպես լուսաբացի,
Եթե պետք է, խաչվիր Քրիստոսի նման...

Ոչ թե սոսկ անվամբ, այլ էությամբ քրիստոնյա մարդուն վայել կյանքը վերագտնելու ամենքիս բաղձանքն արտահայտող այս տողերը ծնունդ էին առել երկրի փլուզումից առաջ, դեռեւս 1980 թվականին: Հոգին անխաթար պահածը իրականությունը տեսնելու եւ աշխարհի ու մարդու համար ցավելու էր, մի բան, որ նշան էր զղջման, խոտովանանքի եւ ապաշխարության: Այստեղ արդեն անցած ճամփին նայելու էր. «**Եւ դու ապրեցիր, ապրելն հեշտ չեղավ**»: Միեւնույն անձի մեջ ապրող հոգեւորը տեսնելու եւ քաջալերե-

լու էր մարմնավորին, երկուսով մի էին լինելու, այսինքն՝ հաշտ, քրիստոնեաբար հաշտ. **«Քեզ դավոդի հետ նստեցիր սեղան»:** Եւ այնքանով, որքանով ինքնախոստովանություն էր սա, չարության ու կեղծիքի նշույլ իսկ չէր ունենալու: Դառնանալու առիթներ լինելու էին իր կյանքի բոլոր կայան-հանգրվաններում, սակայն հույսի, հավատի, սիրո ճամփից չէր շեղվելու: Մինչեւ վերջ իր կոչմանը, իր բնությանը հավատարիմ մնալու էր՝ ինքն իրեն հորդորելով. **«Անչար սրտով տուր կյանքին հրաժեշտ»:** Այնուհետեւ բաղձալու էր երկնայինը. **«Իմ մանկության խաղընկեր արծաթ գետին եմ կարոտ, /Երազներիս երկնային արահետին եմ կարոտ»:** Ինչ ասել կուզե, հոգեւորը հոգու ճանապարհը փնտրելու էր: Սերունդներին մի վերջին խրատ-խորհուրդ տալու էր. **«Հոգին պահեցեք առողջ ու ազնիվ»:** Ինքը կյանքում այդպես վարվելու էր, այն է՝ հոգու ազնվությունը չէր կորցնելու: Հայտնապես իմանալու էր նաեւ, թե ինչի համար. **«Որ ինչ էլ լինի, մրրիկ թե քամի,/ Մարդկային խոսքը Աստծուն հասնի»:** Խոսք որ ասելու էր, կարծելու եմ, աղոթք էինք հասկանալու:

Չգիտեմ էլ թե այսքան բարի վկայություններից ո՞ր մեկը մեջբերեմ եւ որը՝ թողնեմ: Ռաֆայել Համբարյանն, օրինակ, չուզեի էլ, խոսելու էր. **«Դառնամ ու նույնն ասեմ, նրա չորս դին, ասես, ուշադիր ու համբերատար հրեշտակներ էին սավառնում, որ հուշեն նրան անցողիկից անցնել դեպի մնայունը, կատարել մարդկային եւ գրական արարքներ, որոնք մայր հողին եւ հիշողության մեջ բարի հետք են թողնում»:** Ահավասիկ բարին հատարտող այս ժողովածուն նույնպես բարության հետքեր թողնելու էր: Քննելով նրա կյանքն ու գործը, պարզելով նաեւ այս վկայությունների խորհուրդը, Մկրտիչ Սարգսյան մարդու եւ գրողի մեջ տեսնելու էինք խոսքի ասպվածայինը. **«Մերը գեղեցիկ ապրելու իրավունքն է: Այս գիտակցությունը մեզ պիտի մղի առաջ»:** Առաջ, միայն առաջ, բայց ոչ թե հին տիկերի մեջ նոր գինի լցնելով, այլ տիկերը նորոգելով: Սկզբունքը հստակ էր, կայանից կայան, բարձունքից բարձունք տանող, շարունակվող. **«Նորոգիր քո ճամփան, նորից առաջ գնա»:** Այս առաջ գնալը բոլորովին էլ անցյալը մոռանալ չէր նշանակելու, քանի որ անցյալի, ներկայի եւ ապագայի միջեւ սահմաններ չէր դնելու՝ ժամանակները տեսնելով մեկ միասնական ամբողջի մեջ: **«Մերը գեղեցիկ ապրելու իրավունքն է»:** Գեղեցիկի խորհուրդը հստակ դարձնելուց հետո, ասելու ես՝ խոսքը միեւնույն հնչողությունն ու իմաստն ունենալու է բոլոր ժամանակներում: Անչար հոգով այս կյանք-վաղանցուկին հրաժեշտ տալու փափագ ունեցողը ոչ միայն առօրյայում ապրելու էր չարից ու չար գործից հեռու, այլեւ գրիչ վերցնելիս ձգտելու էր հոգիների մեջ սերմանել պտղաբերը: Այդպիսով սերունդներին տալու էր անօրինությունը ատելու եւ արդարությունը սիրելու օրինակը՝ որպես հավիտենական ժառանգություն: Մեջբերելու էի Մկրտիչ Սարգսյանի բանավոր խոսքը՝ ըստ Կլարա Թերզյանի վկայության. **«Գրողը չարացած, ջղայնացած ժամանակ իրավունք չունի գրելու. նա պիտի գրիչը վայր դնի: Օրինակ, հետաքրքիր բան է. իմ մի ձեռքը բոլորովին չի աշխատում, ես գրիչը վերցնում եմ ձախ ձեռ-**

քով, բայց եթե զայրացած եմ, ձախ ձեռքս սկսում է ինձ հետ կռվել, պարզապես չի ուզում ենթարկվել, դողում է: Ես գրիչը դնում եմ մի կողմ, մինչեւ հանգստանում է իմ եփվող արյունը եւ նոր միայն մոտենում գրասեղանին, եւ այն ժամանակ գրիչը հնազանդ է դառնում, ես էլ հլու-հնազանդ նրա հետեւից գնում եմ: Այսպես է աշխարհը. գրողը պետք է այս մասին մտածի՝ չարացած գրողը լավ բան չի գրի»: Ի դեպ, ըստ Ասպոնս խոսքի, չարից հեռանալը հանճար է:

Գրքում տեղ գտած նյութերի դասավորությունը բնականոն ընթացքով էր, նախ գրչակից-սերնդակից ընկերներն էին հանդես գալու, ապա Ջավախք աշխարհի մարդիկ, այնուհետեւ՝ գրողների համեմատաբար երիտասարդ սերունդները: Խոսքի, մտքի, սիրո եւ երախտագիտության երանգները, բնականաբար, տարաբնույթ լինելու էին: Եթե մեկը խոսելու էր ընկերոջ իրավունքով, ապա մյուսը որպես երիտասարդ, ակնածելու եւ գոհություն հայտնելու էր թե՛ խրատների եւ թե՛ իր նկատմամբ ունեցած սրտացավության համար: Բոլորը միասին կերտելու էին Մկրտիչ Սարգսյան մարդու, գրողի, գործչի ու մտածողի դիմանկարը: Գործին, անշուշտ, նպաստելու էին տարբեր տարիների լուսանկարները՝ մեծերի, տաղանդավորների եւ շնորհալիների հետ: Գրեթե գրքի բոլոր էջերին զուգահեռաբար երեւալու էր Մկրտիչ Սարգսյանն ինքը՝ բանաստեղծությամբ, արձակով եւ բանավոր խոսք-խոսակցությամբ: Եւ սա կարեւոր էր, քանի որ ժողովածուի ստեղծման գերագույն նպատակը բարի մարդուն տարբեր առիթներով լսելը, էությանը հաղորդակցվելը եւ ներկայության մեջ հայտնվելն էր: Գրքի ստեղծման միտքը, ասեմ վերստին, պարկեշտ մարդու եւ գրողի օրինավոր վարքի օրինակը սերունդներին թողնելն էր: Հազար տարի հետո էլ սերունդները նայելու եւ տեսնելու էին, թե ովքեր էին եղել իրենց նախնիք, ինչպիսի վարք եւ փոխհարաբերություն էին ունեցել եւ ինչ ու ինչպես էին խոսել միմյանց հետ: Սերունդները գալու եւ գրողի հավիտենական ցավի մեջ հայտնվելու էին.

Մի փափո՛ւկ- փափուկ տխրություն մնաց
Մեր թուխ հերկերի, արտերի վրա,
Երբ որ գութանը թանգարան գնաց
Եւ հորովելը համերգասրահ...

Իհարկե, այս **գութանը** խորհրդանշական էր, խոսքը վերաբերելու էր նախնիների առաքինությանը, նրանց սրտի գութին: Իսկ **հորովելը** մարդու հոգու մեջ եղած, հոգուց բխող աստվածային սրբությունն էր, որ գնալով, ցավոք, ժամանակի բարքերի լեզվով ասած, վերածվելու էր շռուի: Նույնն էր, թե ասելիս լիներ. «Սրբությունը մի տվեք շներին եւ մարգարիտները շաղ մի տվեք խոզերի առաջ, որպեսզի ոտքերով չտրորեն եւ չդառնան ու ձեզ չհոշոտեն»:

Ինչպես Մկրտիչ Սարգսյան մարդու եւ գրողի կյանքն ու կենսագրությունը, այնպես էլ հիշատակաց այս ժողովածուն չէր ամբողջանալու առանց ընտանեկան մթնոլոր-

տի: Ինչպես բարին սերմանող խոսքը եւ բարին գործելու մղումը, այնպես էլ, թող թույլ տրվի ասել, ընտանեկան բարոյականությունը, միասնաբար, բխելու էին նույն աստվածային բնությունից: Ընտանիքն ինքնին Աստծո մտքի արտահայտություն էր, հիմքում՝ հնազանդությունը եւ սերը միմյանց հանդեպ: Անշուշտ, երեխաների համար մեծագույն ժառանգությունը հոր եւ մոր հարաբերություններն էին: Աստված, ի թիվս այլ շնորհների, Մկրտիչ Սարգսյանին նվիրել էր Ելենա անվամբ, որ նույն Հելլենն է, հրաշալի կին, հրաշալի մայր եւ հրաշալի վարքի տեր անձնավորություն: Վկայելու էի աստվածաշնչյան ճշմարտությունը. «**Տունը եւ ստացուածքը ժառանգութիւն է հայրերից, բայց իմաստուն կինը Տէրից է»:** Տիրոջ տվածը օրհնված լինելու էր: Օրհնությունը ծնողից անցնելու էր զավակներին:

Ելենա-Հելլենը, լինելով ազգությամբ հույն, հայտնվելով հայ ընտանիքում, պարկեշտ կին ու մայր լինելը, հավատի, սիրո եւ աստվածային բնության մեջ մնալը վեր էր դասելու ազգային այս կամ այն պատկանելությունից: Եկեղեցում պսակվելիս հարցրել էին՝ հնազանդ ես: Պատասխանել էր՝ այո, հնազանդ եմ: Գիտեր, որ հնազանդությունը ոչ միայն իր ամուսնու, այլեւ Աստծո առաջ էր: Գիտեր, որ պարկեշտ կին եւ մայր լինելը վեհ ու վերին կոչում էր: Այս գիտակցությամբ էլ ապրելու էր ընտանեկան կյանքը՝ միեւնույն սիրով տանելով նաեւ ամուսնու հիվանդության հետ կապված «նեղությունները»: Բառը չակերտի մեջ էի առնելու, որովհետեւ տիկին Ելենայի համար նեղությունները նույնպես քաղցր էին լինելու: Ասածներիս գրավոր հավաստիքը նրա վկայության խոսքն է, որ կրելու էր «Իմ Մկրտիչը» դիպուկ ու պարզ վերնագիրը: Ինչպես թե նա իր խոսքով հաստատելիս լիներ ժողովածուի մյուս բոլոր վկայությունները. «**Մկրտիչը բարի մարդ էր, նա սովորություն ուներ նույնիսկ իրեն վատություն անողին լավություն անելու»:** Երբեմն խոսելու էր այնպես, ինչպես թե ինքն իրենից խոսելիս լիներ. հիրավի, երկուսով մի էին: Մի էին, միասնական ոչ միայն ամուսնական, մարմնական առումով, այլեւ հոգիների հաղորդակցությամբ: Այսպես ապրել էին այս աշխարհում, այս աշխարհից անդին էլ այդպիսին մնալու էին: Զավակներն էլ, անկասկած, ընտանեկան այս ջերմ մթնոլորտում մարմնով ու հոգով աճելու, հասակ առնելու, դաստիարակվելու էին: Այլ կերպ ասած, զավակներն էլ լինելու էին այնպիսին, ինչպիսին ծնողներն էին: Այստեղ նկատելու էի մի նրբություն. զավակների դաստիարակությունը սկսվելու էր դեռեւս աշխարհ չեկած, չծնված, այսինքն՝ իրենց մոր որովայնում գտնվելիս: Պարզեմ միտքս.զավակները սնվելու էին իրենց մոր ստացած թե՛ մարմնական եւ թե՛ հոգեւոր սնունդներով: Ընտանեկան խաղաղությանը, սիրուն ու բարոյականությանը հաղորդակից դառնալու էին դեռեւս աշխարհ չմտած:

Եթե մայրը վկայությունը վերնագրելու էր «**Իմ Մկրտիչը**», ապա դուստրը՝ Նաիրան, նույն սկզբունքով, իր խոսքին տալու էր «**Հայրս**» մտերմիկ խորագիրը: Սերը խոսեցնելու էր: Հոր տված արդար եւ միակ ապրակն իսկ կարոտով վերհիշելու էր: Հիրավի, հայրական այս կարգի խրատ-ապրակն էր, որ Ջիվանու սրտում երգ դառնալու

եւ այնուհետեւ շուրթին հնչելու էր. «**Ապրակով սնած տղան առանց ասրիճան չի լինի**»: Փառք Աստծո, նրանք, որ ընդունել, սիրել էին իրենց հորը, սիրո եւ հարգանքի արժանանալու էին:

Քանի որ հայրը անկեղծորեն բացվել, իրեն եւ իր էությունը ցույց էր տվել զավակներին, զավակների համար իրենց հոր խոսքը հնչելու էր որպես կանոն, որպես ճշմարտություն: Հոր խոսքը օրենքի ուժ ունենալու էր: Դավիթը, որ ավագ որդին էր, շարունակելով լսել եւ կատարել հոր ասածները, վկայության խոսքին տալու էր ճշգրիտ վերնագիր. «**Հայրս ասում էր...**»: Որդին տեսնելու էր կյանքի այն հիմքը, որ հայրը դնելու էր, այն է՝ հորից սովորելու էր ապրելու եւ գործելու կերպը: Ըստ Աստվածաշնչի, ծնունդյան հիմքում հայրն էր: Օրհնությունը հորից էր, խրատի հավիտենականը՝ հորից: Դավիթն էլ խոսելու էր այն, ինչ լսել ու տեսել էր. «**Երբեմն-երբեմն հայրս մեր տան պատշգամբից հայացքը հառում էր Արարատ լեռանը, կարծես հոր պատկերն էր փնտրում, կարծես հոր կարոտն առնել էր ուզում Բիբլիական սարից: Հորս այդ հայացքը վերափոխիչ դեր խաղաց իմ կյանքում: Հայրս շարունակ խոսում էր իր հորից: Դա եւս բարի օրինակ էր ինձ համար: Խոսում էր, որովհետեւ ընդհատված բան կար, մանկան կարոտ կար. ընդամենը ինը տարեկան է եղել հայրս, երբ կորցրել է հորը: Ահա թե ինչու էր շարունակ փնտրում հոր պատկերը: Ինձ թվում է, հայրս իր հոր նման մարդ էր: Հոր աչքով նայում էր աշխարհի բոլոր երեխաներին... Հորս զորավոր ուժը Երկրի նկատմամբ, ծնողի նկատմամբ ունեցած ասրվածային սիրո մեջ էր ու նաեւ՝ մանկության մաքրությունը պահելու մեջ: Ամենուր, ամեն ինչում մաքուր մնաց հայրս: Սա եւս կյանքի կարեւոր դաս է ինձ համար**»:

Կրտսեր որդին՝ Վահագնը, հոր հիշատակի առջեւ ունենալու էր մեկ այլ ծառայություն՝ ջանք չխնայելով սույն ժողովածուն կազմելուն եւ խմբագրելուն: Քանի որ տան փոքրն էր, տանը մնալու էր որպես մխիթարության որդի: Կոչված էր այդպիսին լինելու: Կար ժամանակ, հայրը նրա ձեռքից բռնած տանելու էր զբոսանքի: Որքան էլ զարմանալի թվար, դերերը փոխվելու էին: Մարդիկ տեսնելու էին, որ որդին՝ Վահագնը, հնսուլտ կոչվածի հարվածն ստացած հոր հետ ընկերանալով, թեւը բռնած, անցնելու էր փողոցով: Ճշմարտության առաջ բնաւ մեղանչած չէի լինելու, եթե ասրվածաշնչյան մտքով ասելու լինեի՝ հայր եւ որդի մի էին: Այն, ինչ կատարվում էր, Մկրտիչ Սարգսյան հայրը տեսել էր ժամանակին, տեսել ու գրել էր.

Անձրեւ իջներ խաղաղ, բերքիս ընկերանար,
Որդիս հասակ առներ, ձեռքիս ընկերանար...

Ահավասիկ, որդին հասակ առել եւ ընկերացել էր ձեռք-վիրավորին: Միայն այսքանը չէր, միայն մասնավորը չէր, գրողի հոգին բացվելու էր դեռեւս մեղավոր աշխարհի եւ դեռեւս մեղավոր մարդկության փրկության համար էլ.

Սերը հրամայող ու տեր լիներ հավետ,
Թող որ սիրտը մարդու միայն սիրուց ցավեր,
Աշխարհում չլիներ ոչ մահ եւ ոչ ավեր,
Եւ անմահությունը երգիս ընկերանար:

Հոգեւոր դաշտի մշակը գիր-գրականությամբ, վարքով, աշխարհի նկատմամբ ունեցած հայացքով իր դասը վարելու էր որպես դասագիրք, որպես բարի սերմնացան, իր գործն անելու էր: Այն, ինչ ցանելու էր նա, ժամանակի լցվելուն պես, սերունդները՝ որպես նորօրյա մշակներ, տեսնելու էին հունձքի առատը: Տեսնելու եւ դասեր քաղելու էին: Ահա այս ժողովածուն եւս նորանոր դասեր քաղելու համար էր ստեղծվելու: Սովորաբար ասում ենք՝ հարկավոր է մարդ մնալ, ունենք նման արտահայտություն: Բայց արի տես, ընդամենը մարդ լինելով ու մարդ մնալով, կյանքը չէիր վերափոխելու, հեւրագիծ չէիր թողնելու: Պողոս առաքյալը Եբրայեցիներին ուղղված թղթում ասում է. **«Մարդն ի՞նչ է որ դու յիշես նորան»:** Ուրեմն՝ ավելին լինել, քան մարդու մասին ունեցած մեր պատկերացումն էր: Իսկ ավելին լինել, նշանակելու էր վերադառնալ, վերագտնել աստվածային բնությունը:

Արդ մտածելու էի. որքա՞ն կարեւոր էր մի մարդու ներկայությունը թե՛ մեր, թե՛ հասարակության եւ թե ազգի կյանքում: Որքա՞ն բան էր փոխելու բնույթով անեղծը, անխաթարը: Մեկը կարողանալու էր մի ողջ ժողովրդի միտք-մտածողության մեջ հեղափոխություն մտցնել: Ժողովուրդը, որքան էլ իմաստուն լիներ, նորոգման կարիք զգալու էր: Նորոգում ասելիս, անշուշտ, միտք-մտածողությունից բացի, նկատի էի ունենալու սիրտն ու հոգին, հոգեւոր արթնությունը: Գրողի գործը մեկ այլ բան չէր լինելու, եթե ոչ մարդուն ճշմարտությունը, շեշտելու էի, աստվածային ճշմարտությունը, հասցնելը: Այս ընդգծումն անելու էի, որովհետեւ ինչպես սուտ մարգարեները, այնպես էլ արվեստի սուտ ու երեսպաշտ գործիչները հանդես գալու էին: Սատանան, բնականաբար, ջանք չխնայելով, գործելու էր արվեստի բնագավառում հայտնված մարդկանց միջոցով էլ: Արդյունքում մասսան մոլորվելու էր, ակամա կորցնելով արվեստի ու արվեստագետի նկատմամբ ունեցած դասական հավատը: Խնդրեմ, Մկրտիչ Սարգսյանն այնքանով էր մեծ, որքանով կարողանալու էր ոչ միայն կյանքի անբիծ ուղի բռնել, այլեւ մտքի խորագիտությամբ, երբեմն խաղաղ լռությամբ, երբեմն էլ հոգու ճիչ-պոռթկումով, հեւր մղել, խափանել չարի գործը: Եւ դա նա անելու էր աստվածային բարությամբ. խավարի դեմ ելնելու էր ոչ թե խավարով, այլ այն լույս-կրակով, որ Աստծուց էր: Աստված, անկասկած, գործելու էր նրա միջոցով: Ըստ Աստվածաշունչ Սուրբ գրքի, նման մարդիկ պատվական անոթ էին Աստծո ձեռքին:

Վերստին ասելու էի, որ լավ ու բարի մարդու կարոտից հրամայաբար ծնվելու էր «Դու անկործան վանք կմնաս» գիրք հիշատակագրը, որը սերունդների առջեւ պարզելու էր ճիշտ օգտագործված այն շնորհը, որ Աստծուց էր: Այսքանը եւ այսպես խորհելու, խոսելու ու իմ ձեռքով գրելու էի, քանի որ հավատով էի:

ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՀՈՎՆԱԹԱՆ